«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 23-03/02

ք. Երևան,Արշակունյաց 5, 417 սենյակ 23.10.2018թ. ժամը 17:00

Համաձայն 23.07.2018թ. գրությամբ՝ ՀՀ արդարադատության նախարարություն հացեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 03.08.2018թ-ին ստացված, «ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ-ի ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Էյ Ջի Դիվելըփմենթ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի հոկտեմբերի 23-ին ժամը 17.00-ին հետաձգված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Դիմումատու «ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ-ի ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանը
«Էյ Ջի Դիվելըփմենթ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
«Էյ Ջի Դիվելըփմենթ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանը

Դիմումատու «ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ-ի ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանը ծանուցվել էր նիստի մասին, սակայն նիստին չէր ներկայացել:

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ
23.07.2018թ. գրությամբ՝ ՀՀ արդարադատության նախարարություն հացեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 03.08.2018թ-ին ստացված, «ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ-ի ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Էյ Ջի Դիվելըփմենթ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը, ստուգեց կարգապահական վարույթի կողմերի և հանձնաժողովի անդամների ներկայությունը: Կարգապահական հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց, որ «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 4.4-րդ կետի համաձայն, հանձնաժողովի նիստի վայրի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված սնանկության գործով կառավրչի և/կամ այլ անձնաց բացակայությունը արգելք չէ կառավարչի նկատմամբ հարուցված կարգապահական խախտման քննարկման համար և առաջարկեց նիստը շարունակել առանց դիմամտուի, քանի որ կողմը պատշաճ ծանուցվել է:

ԼՍԵՑԻՆ –Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց, որ 05.10.2018թ-ին նշանակվել էր նիստ, որը հետաձգվել էր, քանի որ «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անդամների քվորում ապահովված չէր: Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը հակիրճ ներկայացրեց բողոքը և Կարեն Ասատրյանի կողմից 31.07.2018թ-ին «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովին ներկայացված դիմումի պատասխանը:

ԼՍԵՑԻՆ-«Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 4.6. կետի համաձայն, քանի որ բողոք ներկայացնող անձը չէր ներկայացել կարգապահական նիստին, ձայնի իրավունք տրվեց «Էյ Ջի Դիվելըփմենթ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Կարեն Ասատրյանին: Վերջինս նշեց, որ ինչպես ներկայացրել է պատասխանում, Երևան քաղաքի ավագ հարկադիր կատարող Ա.Սուքիասյանի կողմից հարուցված թիվ 02069202 կատարողական վարույթի շրջանակներում 12.01.2018թ. կայացված որոշման հիման վրա, «Էյ Ջի Դիվելըփմենթ»ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող ք.Երևան, Արգիշտի փ. 11/11 հասցեում գտնվող հողամասը և անավարտ շինությունը ներկայացվել էր հարկադիր էլեկտրոնային աճուրդի: Հարկադիր կատարողի կողմից որոշման մեջ ք.Երևան, Արգիշտի փ. 11/11 հասցեում գտնվող հողամասի մակերեսը նշվել է 0.162416 հա, իսկ անավարտ շինության մակերեսը չի նշվել: Այնուհետև էլեկտրոնային աճուրդում ներկայացված հայտարարության համաձայն թիվ 294114 լոտի նկարագրական մասում գույքի ընդհանուր մակերեսը նշված էր 16044.78, որից ստորգետնյա 3 հարկեր, 4232.31քմ, 1-9հարկեր 7167.57քմ, 10-15 հարկեր՝4644.9 քմ: Այսինքն ներկայացված թվերը չեն համապատասխանում իրականությանը, քանի որ ք.Երևան, Արգիշտի փ. 11/11 հասցեում գտնվող անավարտ շինության մակերեսը մոտ 1000քմ ավելին է քան էլեկտրոնային աճուրդի ընթացքում, որի արդյունքում «Էյ Ջի Դիվելըփմենթ»ՓԲԸ-ն և այլ շահառուները/այդ թվում և «ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ-ն/ կարող էին կրել խոշոր վնաս: Վերոնշյալ տեղեկությունների վերաբերյալ 10.07.2018թ-ին ՀՀ գլխավոր հարկադիր կատարողին հասցեագրել է համապատասխան գրություն, որի հիման վրա գույքը հանվել է էլեկտրոնայնի աճուրդից և կատարվում են նոր չափագրություն և գույքի գնահատում:

«Էյ Ջի Դիվելըփմենթ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Կարեն Ասատրյանը հայտնեց, որ իր գործողություններում եղել է օբյեկտիվ և ոչ միայն չի խախտել սնանկության գործով կառավարչի վարքագծի կանոնագիրքը և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի նորմերը, այլ պատշաճ իրականացրել է իր պարտականությունները՝ գործելով ի շահ «Էյ Ջի Դիվելըփմենթ»ՓԲԸ-ի և այլ շահառուների՝/այդ թվում «ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ-ի/ և կանխել է խոշոր վնասներ կրելուց: Կառավարիչը նշեց նաև, որ ք.Երևան, Արգիշտի փ. 11/11 հասցեում գտնվող և արգելադրված անշարժ գույքից «ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ-ի կողմից 19.07.2018թ-ին կատարվել է գործարք, որից ծագող իրավունքները ստացել են պետական գրանցում/95.3քմ և 158.5 քմ շինությունների մասվ/: Կարեն Ասատրյանը ներկայացրեց նաև արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշման պատճեն և 26.07.2018թ-ին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականների պատճենները:

ԼՍԵՑԻՆ –Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց կարգապահական հանձնաժողովի անդամներին նաև «Էյ Ջի Դիվելըփմենթ»ՓԲԸ-ի տնօրեն Է.Մելիքյանի գրությունը ուղղված «Էյ Ջի Դիվելըփմենթ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Կարեն Ասատրյանին, որտեղ մասնավորապես ասվում է, որ ք.Երևան, Արգիշտի փ.

11/11 հասցեում գտնվող հողամասը և անավարտ շինությունը ներկայացվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, որի իրական մակերեսը 1000քմ ավելին է քան էլեկտրոնային աճուրդում ներկայացված հայտարարության նկարագրական և «գույքի կազմը» մասերում:

ԼՍԵՑԻՆ –«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական Հանձնաժողովի անդամ Ռուբեն Խալաթյանը ձայնի իրավունք վերցնելով արտահայտեց այն կարծիքը, որ «Էյ Ջի Դիվելըփմենթ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Կարեն Ասատրյանի գործողություններում որևէ խախտում չի տեսնում: Սնանկության գործով կառավարիչ Կարեն Ասատրյանը գործել է ՀՀ «Սնանկության մասին» օրենքի շրջանակներում, մասնավորապես 55-րդ, 56-րդ և 57-րդ հոդվածներով: «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածը սահմանում է, որ կառավարիչը ձեռնարկում է պարտապանին պատկանող գույքի պահպանման համար անհրաժեշտ բոլոր միջոցները: Նշված հանգամանքներում կառավարչի կողմից գույքի պահպանությունը և նոր չափագրումները կդիտվեին օրենքի խախտում և հետագայում հարց կարող էր առաջանալ 1000քմ մակերեսով հողը ինչու չի եղել գույքի կազմում:

ԼՍԵՑԻՆ –Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց կարգապահական հանձնաժողովի անդամներին նաև 12.09.2018թ-ի հարկադիր կատարողի որոշումը վերադասության կարգով մասնակի վերացնելու որոշումը և կատարողական վարույթը վերսկսելու մասին որոշումները:

«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական Հանձնաժողովի անդամները ծանոթացան որոշումների բովանդակությանը: ԴԱՀԿԾ 12.09.2018թ-ի որոշման մեջ գրված է, որ կատարողական վարույթը կասեցվել էր հողամասի մակերեսի վերաբերյալ անհամապատասխանության հարցը որոշելու համար: 27.08.2018թ նոր փորձագիտական եզրակացությամբ գույքի շուկայական արժեքը գնահատվել է 198 700 000 ՀՀ դրամով ավելի քանկ: Կատարողական վարույթը վերսկսելու մասին 27.08.2018թ որոշմամբ ևս արձանագրվել է, որ չափագրման աշխատանքներում առկա է եղել սխալմունք:

ԼՍԵՑԻՆ –Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը ամփոփելով նիստը արտահայտեց այն կարծիքը, որ ևս չի տեսնում խախտում «Էյ Ջի Դիվելըփմենթ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Կարեն Ասատրյանի գործողություններում, որ առավարիչը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի համապատասխան է գործել, սույնով ապահովել է պարտապանի և պարտատերերի ընդհանուր շահերը: Ուստի առաջարկեց կարճել կատարողական վարույթը և հարցը դրեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 5

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. 23.07.2018թ. գրությամբ՝ ՀՀ արդարադատության նախարարություն հացեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 03.08.2018թ-ին ստացված, «ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ-ի ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Էյ Ջի Դիվելըփմենթ» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանի գործողությունները/անգործություն/, օրենքներին և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթը կարող է կարճվել, քանի որ կառավարչի գործողությունները չեն պարունակում օրենքի կամ վարքագծի կանոնների խախտումներ, և կատարվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ, 55-րդ, 56-րդ հոդվածների կարգով և բխել են նույն օրենքի 56-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովման անհրաժեշտությունից և հիմնավորված են 29-րդ հոդվածի 1-ին մասի /ե/ կետով իրեն վերապահված լիազորություններով, ու կարգապահական վարույթի ընթացքում նրա մեղքը ապացուցող փաստերի /ապացույցների/ բացակայության պատճառաբանությամբ:

2.Սույն եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Մարտիկյան